ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիս, 2020 թվականի № 19-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի № 50-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի պահանջներով՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1.1. Որոշման տեքստից (այդ թվում՝ վերնագրերից) հանել ««Շիրակի հանրային հեռուստառադիո»» բառերը:

1.2. Որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 2.2 կետը փոփոխել՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«2.2. Գործադիր տնօրենի թափուր պաշտոնին ներկայացվող պահանջները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:

1.3. Որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 2.11 կետը փոփոխել՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«2.11. Գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար անցկացվող մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը սահմանվում է Խորհրդի որոշմամբ:»:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 մայիս, 2020 թվականի
ք. Երևան